

ԱՌ ՆԱԽԴՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Հայերենի նախդիրների բառակազմական, ածանցական արժեքը դեռևս հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել: Դրանցով կազմված բառերի ստուգաբանությամբ զբաղվել են Հ. Հյուբշմանը, Ա. Մեյեր¹ և ուրիշներ: Կարևոր և անփոխարինելի աղբյուր է Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառաբանք», որտեղ ստուգաբանորեն քննված են նախդիրները, դրանց բառակազմական զանազան դրսևորումները²: Մ. Աբեղյանը «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ հատուկ ուշադրություն է դարձրել նախդրավոր բայերին՝ կատարելով բազմաթիվ արժեքավոր դիտողություններ³: Հետաքրքրական դիտարկումներով հարուստ են Ստ. Մալխասյանցի «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները» աշխատությունն ու Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձևաբանությունը»⁴: Տարբեր տեսանկյուններից հարցին անդրադարձել են նաև Ս. Էլոյանը, Ա. Մուրադյանը, Մ. Մուրադյանը և ուրիշներ, զգալի նյութ է ամբարված հայերենի հին և նոր բառարաններում⁵:

Առ նախդիրը (ինչպես հայերենի մյուս նախդիրները) գրաբարում հանդես է գալիս սպասարկու նշանակությամբ: Այն գործածվում է տրական, հալցական, բացառական և գործիական հոլովների հետ և արտահայտում տարածական, ժամանակային, պատճառական, նպատակային, վերաբերական և այլ հարաբերություններ⁶:

Վաղուց անտի առ նախդիրն իր հիմնական գործառույթին զուգընթաց կիրառվել է նաև ածանցական նշանակությամբ: Նախդիրների ածանցական արժեքով կիրառությունն առհասարակ հատուկ է նախդրավոր լեզուներին՝ հին հունարեն, լատիներեն, գերմաներեն, ռուսերեն և այլն: Հայոց լեզվի զարգացման տարբեր շրջաններում առ նախդիր-նախադանցով (նն) կազմվել են պատկառելի թվով բառեր:

Բառական, իմաստային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ առ նն-ավոր բառերը կարող ենք բաժանել հետևյալ խմբերի՝ 1. բառեր, որոնցում

¹ Heinrich Hübschmann, *Armenische Grammatik* (I Teil, *Armenische Etymologie*), Hildesheim, 1862, Ա. Մեյեր, *Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978*.

² Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ «Արմ. բառ.»)*, հ. 1, Երևան, 1971, հ. 2, 1973, հ. 3, 1977, հ. 4, 1979:

³ Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. 2, Երևան, 1974, էջ 149—153:

⁴ Ստ. Մալխասյանց, *Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները*, Թիֆլիս, 1891, Ա. Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձևաբանություն*, Երևան, 1976, էջ 228:

⁵ Ս. Էլոյան, *Ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1963, էջ 57, 73—76, Ա. Ն. Մուրադյան, *Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում*, Երևան, 1971, էջ 139, Մ. Հ. Մուրադյան, *Բառագիտություն (աշխույժ լեզվի սլաոմական քերականություն)*, հ. 2, Երևան, 1975, էջ 58—68), է. դ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Երևան, 1976, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 1, Երևան, 1969:

⁶ Մ. Աբեղյան, *նշվ. աշխ.*, էջ 809—811, Ա. Ա. Աբրահամյան, *նշվ. աշխ.*, էջ 229—236, Վ. Ա. Քոսյան, *Դրաբարի բառակապակցությունները*, Երևան, 1980, էջ 192—206:

լիովին կամ հիմնականում մթագնված է նախդրի իմաստը, 2. հունարենից պատճենված կամ նրա նմանակությամբ ստեղծված բառեր, 3. բառեր, որոնցում առ-ը պակասվել է նախդրային իմաստները, 4. առ նն-ով արդի բառեր:

Քննենք ըստ բառախմբերի.

1. Բառեր, որոնցում լիովին կամ հիմնականում մթագնված է նն-ի իմաստը:

Օրինակ՝ առասպել, առաստաղ, առատուկ կամ առատիկ, առաքինի, առա-
ւիր, առաւօտ, առոյգ, առաշոգ կամ առոշոգի բառերը: Սրանց արմատները կա՛մ
անմիջապես հնդեվրոպական հիմք լեզվից են, կա՛մ իրանյան փոխառություն,
առանձին անգործածական և հայերենում բացի նշված կազմություններից գրեթե
ուրիշ կիրառություններ չունեն: Քվարկված բառերը հավանաբար ստեղծվել են
նախադրային շրջանում, իսկ գրաբարի փուլում արդեն սրանց բաղադրիչ մա-
սերը ձևույթի արժեքով չեն գիտակցվել, ինչպես՝ *սպել, *ստաղ, *տի և այլն⁷:
Առ-ի, իբրև նախածանցի, վաղնջական կիրառության այս օրինակները վկայում
են առ նախդրի առավել վաղեմությունը: Իսկ առակ, առանձին, առագաստ,
առանց, առեղծանել, առողջ բառերի արմատները՝ ակն, անձն||անձին,
ագ, անց, եղծ, ողջ, բնիկ հայերեն բառեր են, և ի տարբերություն
վերոհիշյալների՝ հայերենի արգասավոր արմատներից, որոնցով կազմվել ու
կազմվում են նորանոր բառեր (նաև նախդրներով), ինչպես՝ խայտակն,
ակնաբույժ, անձնապահ, յ-անձնել, ըստ-անձնել||ստանձնել, ագանիմ, ընդ-ագ-
ուցել, անցանհմ, գ-անցանհմ, յ-անցանհմ, անեղծ, գ-եղծանհմ, ողջախոհ՝ և
այլն: Առ այսօր նշված արմատները մեծ մասամբ գիտակցվում են, չնայած
նն-ավոր կազմություններն արդեն միաձուլվ են ընկալվում:

Քեև այս բառախմբի բոլոր բառերն էլ ստեղծվել են շատ վաղ ժամանակ-
ներում, երբեմն, այնուամենայնիվ, հնարավոր է նշել նն-ի որևէ իմաստ: Դրա
համար անհրաժեշտ է նախ պարզել բառի կազմությունը, հաշվի առնել նրա
ստուգաբանական և բառական նշանակությունները: Օրինակ՝ առաստաղ բառը
կազմված է առ նախդրով հնխ. *stel-«դնել զետեղել, բարձրացնել, կանգնեցնել»-
ցից, սյուն, հենարան» արմատից (ԱՌՄ. բառ., հ. 1, էջ 254): Առաստաղը
շինության ծածկի ներքևի մասն է, այսինքն՝ այն, ինչ բարձրացվում, դրվում
է սյուների, պատերի վրա: Ակնհայտ է նն-ի «վրա» նախդրային իմաստը: Նույն
ձևով առատուկ կամ առատիկ (կազմված է առ նախդրով հնխ. *dē->տի «կա-
պել» արմատից) բառը՝ առաստան կամ չվան, որով հանցավորի ոտքերն ու
գլուխը պրկում էին գելարանի մեջ» (ԱՌՄ. բառ., հ. 4, էջ 655): Այս իմաստից
բխում է առ-ի համար, նպատակով՝ նշանակությունը:

Մթագնված, բայց վերականգնելի են առ նն-ի իմաստները նաև հետևյալ
բառերում առակ (առ = առաջ, դիմաց), «առանձին», («վրա»), առագաստ
(«վրա»), առաւօտ («մինչև»): Իսկ առաւիթ, առանց, առեգծանել բառերում
նն-ի և արմատի իմաստային խիստ միաձուլման, ինչպես նաև արմատների
դժվարըմբռնելի լինելու հետևանքով տեղի է ունեցել առ-ի իմաստի լրիվ
կորուստ:

Առ նն-ով բառերի ամենահին շերտում նկատում ենք մի հետաքրքրական
երևույթ: Հայտնի է, որ գ նախդիրը գրաբարում իբրև նախածանց կիրառվում է
սաստկական նշանակությամբ կամ, ինչպես նշում է Մ. Աբեղյանը, «ֆիզիկա-
կան նշանակությունը փոխում է բարոյականի»⁸: Օրինակ՝ արմանալ-գառ-
մանալ, անցանել-գանցանել, արդ-գարդ և այլն: Ցարդ այս դործառույթը վե-
րագրվել է միայն գ նն-ին: Սակայն իմաստային նույնպիսի երանգով, թեև ոչ
նույն ընդգծվածությամբ, հանդես է գալիս նաև առ-ը: Առ(ա)-սպել.— արմատն
է հնխ. *spel-«խոսել, պատմել» (ԱՌՄ. բառ., հ. 1, էջ 253): Բառի նշանա-
կություններից մեկն է՝ «պատմական գրույց՝ շափազանցված, անհավանական,
սուտ, շինովի»: Այդպես էլ առ-ը (< *ոլգ «ուժ, զորություն»՝ իրանյան փո-

⁷ Հմմտ. Ա. Ա. Աբրահամյան, Նշվ. աշխ., էջ 228, Մ. Հ. Մուրադյան, Նշվ. աշխ., էջ 58:

⁸ Մ. Աբեղյան, Նշվ. աշխ., էջ 152—153:

խառնություն. ն. տ., էջ 263), առ-աշոգ կամ առ-աշոգի «առանձին, դատ, հատուկ (<աշոգի «առանձին, հատուկ, մասնավոր»՝ իրանյան փոխառություն. ն. տ. էջ 219—220), առ-աղբ բառերում առ-ն ունի զորացուցիչ մասնիկի դեր. իսկ առաֆինի բառում (<ֆէն, որ ծագում է հնթ. *qet-«կոխվ» արմատից) նախնական «քաշ, կտրիճ» իմաստն անցնում է բարոյականին՝ «անբասիր, բարոյապես մաքուր»⁹:

2. Հունարենից պատճենված կամ հունարենի նմանակությամբ ստեղծված բառեր: V—VII դարերի գիտական մտքի վերելքի պայմաններում հունաբան դպրոցի գիտնականները հոմարենի նմանողությամբ կատարված մի շարք բառակազմական նորամուծություններով ևս ընդլայնեցին հայերենի նախածանցների շրջանակը՝ օգտագործելով նաև առ և ընդ նախդիրները (վերջինս ևնթարկեցին հնչյունական փոփոխության ենթ—): Եթե մինչև հունաբանական շարժումը եղած նն-ավոր բառերն ստեղծվել են նախդրային կիրառությունների հիման վրա՝ բնական ճանապարհով, ապա այս դեպքում նախդրի ածանցական արժեքով կիրառությունը կատարվում է արհեստականորեն, որը, սակայն, խորթ էր լեզվի զարգացման ընդհանուր ոգուն:

Առ նախդիրը հունաբանները կիրառել են որպես πρὸς, ἐκ, ἐν նն-երի համապատասխան նախածանց: Առ նն-ով հունարենից պատճենվել կամ նրա նմանակությամբ ստեղծվել են քերականական բազմաթիվ տերմիններ՝ առ-նգանություն— πρὸς-οὐσία, առ-ստուրիւն— πρὸς-ἡγορία, առ-աքական— ἐπὶ-σταλινγή և այլն¹⁰: Հունարենից պատճենված բառերում առ նն-ը պահպանում է նախդրային իմաստները, որովհետև πρὸς, ἐκ, ἐν նախդիրները հոլովաձևերի հետ հունարենում արտահայտում են գրեթե նույն իմաստները¹¹ ինչ առ-ը՝ հայերենում, և երկրորդ՝ հունաբանները կատարում են տերմինների (և ընդհանրապես բառերի) իմաստային ճշգրիտ պատճենումներ: Այս պատճենումները հիմնականում բայեր են՝ առ-արկանելմ / առ-արկեմ (նն-ն արտահայտում է «առաջ, դեմը» իմաստը) πρὸς-βαλλω, առ-ստեմ («դեպի») πρὸς-αγορεύω, առ (ա)-դրեմ («մտ, կողքին») πρὸς-ποιέω, առ-ընդունիմ («մտա») πρὸς-λαμβάνω, ἐκ-βεγχαίω, առ-անկանլիմ («մտա») πρὸς-πίπω և այլն: Հունաբանների այս և մյուս պատճենումները վերածվել են բառակազմական կաղապարի՝ «առ-+բայ», որը, իբրև այդպիսին, մեր լեզվում առաջիններից է¹²:

Հունարենի նմանակությամբ ստեղծված մի խումբ գրաբարյան բառերում առ նն-ը հանդես է գալիս սաստկական նշանակությամբ կամ էլ իբրև սսին տարր («Թարմատար»): Դրանք են՝ առքնատրիմ, առքնդդիմացումն, առքնդելական, առքնթանալ, առքնկենով, առքսել, առքնանակել և այլն:

Առ նն-ը սաստկական նշանակությամբ. առքնթանալ և ընթանալ— «Առաքինի միտք յամենայն վայրի փութան առքնթանալ. և ընդ ամենայն կիրճս անարգել անցանել» (ՆԶԲ, հ. 1, էջ 302), «Բայց այս բարբառ ստէպ ստէպ ընթանայր» (ն. տ., հ. 1, էջ 776): Առլսել և լսել— «Ձորս այսմ ծաղկի դաշտս ի մարգարէութենէն առլուալ» (ն. տ., հ. 1, էջ 306), «Ի կարդալ իմում լուալ ինձ» (ն. տ., հ. 1, էջ 306):

9 Է. Բ. Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 27—28:

10 Հայերեն-հունարեն բառերի ցանկը կազմել, իմաստները համեմատել ենք ըստ հետևյալ հրատարակությունների՝ Н. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, «Երբ բառերը հայկազան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Երևան, 1979, И. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, М., 1959; Ա. Ն. Մուրադյան, Նշվ. աշխ., էջ 139:

11 Պ. Բեդիրյան, Ն. Հեքեքյան, Ռուսերենից բառային նորագույն սլաոններումների մասին (ՀՍՍՀ ԳԱ Վրաբեր հասարակական գիտություններ, 1932, № 12, էջ 65—69):

Առ նն-ն իբրև «սին տարր»։ Առնշանակել և նշանակել — «Բայ է, որ առնշանակել ամանակ» (նշԲ, հ. 1, էջ 309), «Մասն բանի հոլովական, մարմին կամ իր նշանակելով» (ն. տ., հ. 2, էջ 436), առփոխել և փոխել «նոյնպէս մնաց բանս (իմաստ բանիս) և սակաւիկ ինչ առփոխեցաւ» (ն. տ., հ. 1, էջ 313), «Մի՛ փոխեւ զսահմանս» (ն. տ., հ. 2, էջ 950)։

Հիշյալ նն-ավոր բառերում, անկասկած, առ-ը միշտ անորոշ, «թարմատար» չի եղել, այլ ունեցել է որևէ նշանակություն կամ իմաստային երանգ, սակայն ժամանակի ընթացքում կորցրել է իմաստային որոշակիությունը¹²։ Նն ունեցող բայերը պրոֆ. Մ. Արեղյանը բաժանում է երկու խմբի¹³։ Առաջինի մեջ գնում է այն բայերը, որոնց նախդիրները դրվել են նախ անունների վրա, ապա սրանցից կազմվել են բայեր, ինչպես՝ «առ կայծ մերձի» արտահայտությունից՝ առկայծել, «առ անձին ունել»՝ առանձնել և այլն։ Մյուս խմբի՝ իսկական նախդրավոր բայերի (նախամասնիկի և բայի հարադրությանը կազմված) սկզբի նախդիրները բայերի խնդիրների նախդիրներն են, որոնք հետագայում դրվում են բայերի վրա, ինչպես՝ առասել-ասել առ այս, առքերել-քերել առ... և այլն։ Հետաքրքիր է, որ այս բայերի կիրառության ժամանակ երբեմն հանդես է գալիս առ նախդիրը։ Օրինակներ՝ «Աստուծոյ... առաքեալ առ նոսա» (Ա գ ա թ ա ն գ ե զ ո ս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 172), «Առաքէ հրեշտակս առ Արայն Գեղեցիկ...» (Մ ո վ ս ի ս ի խ ո Ր Ե Ն ա ց ւ ո յ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 49), «Բարութ և զգիր լինելութեանն առ ճշմարտութեան մարդոյն առասաց» (նշԲ, հ. 1, էջ 292), «Մի՛ երբէք անշնորհակալք առ բարեգործն սողնիքիմք» (ն. տ., էջ 301), «Առ հարաւային լուսոյն առկայիլ» (ն. տ., հ. 1, էջ 306)։ Այս երևույթն առավել ցայտունությամբ է դրսևորվում ռուսերենում՝ *надеялся на успех, отступать от преследователей, сравнивать с другим, подниматься под документом, доводить до кипения* և այլն։

3. Բառեր, որոնցում պահպանվել են առ նախածանցի նախդրային իմաստները։ Մի մեծ խումբ բառերում (ներառյալ հունարանությունները) առ նն-ը պահպանել է նախդրային իմաստները։ Այս իրողությունը պայմանավորված է բառի մյուս բաղադրիչին նախածանցի ձուլման աստիճանով։ Ըստ առ նն-ի իմաստների կարող ենք առանձնացնել հետևյալ խմբերը.

ա) նն-ն արտահայտում է «մոտ, կողքին» իմաստը՝ առգրեմ, առդատել, առգոմ, առդոյանամ, առեմ, առկալ||առկայանամ||առկայեմ, առկայծ, առդուրս, առաւի։

բ) «Մինչև» իմաստը առ այծմ||առայծմ, առ այսօր||առայսօր, առապագայ, առյաւէտ, առմիշտ, առնդմիշտ։ Բոլոր բառերն էլ կազմվել են «առ+ժամանակ ցույց տվող բառ» կաղապարով։ Նախդիրը համարժեք է մինչև նախադրության։ Իսկ առլի, առլեցուն բառերում նախդրային իմաստին միահյուսվել է սաստկական երանգը։

գ) Ուղևորման հայցականի իմաստը՝ առոտնեմ, առաջ, առէջ, առիկող, առիշեղ, առաստուածընթաց։

դ) «Վրա» իմաստը՝ առանձնեմ, առակոչութիւն։ Երկրորդ բառում նն-ը համապատասխանում է մակ- նախածանցին։

ե) «Համար» իմաստը՝ առնաւառչեայ, առօր։

զ) «Դեմ, ընդդեմ» իմաստը՝ առերես||առ երեսս, առնակստիմ, առնակա-տում (նոր բառ է)։

է) Համապատասխանության իմաստ՝ «իբրև» առգին, առստուերագիր, առերևոյթ։

Մի քանի բառերում առ նն-ն ունի միջադաս կիրառություն՝ գ նն-ից հետո, ինչպես՝ գ-առ-ի-վեր, գ-առ-ամ, գ-առ-անց-ել, գ-առ-անցանել, գ-առ-ած-

¹² Գրեթէ նույնպիսին է բաղադրության քերականական ան ածանցը զրաբարի անթծանել||ունեծել, անշառանել||անշառանել, զեղծանել||զեղծել և այլ բառերում (Ա.՝ Ա. Ա բ բ ա հ ա մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 101)։

¹³ Մ. Ա բ ե դ յ ա ն, նշվ. աշխ., էջ 150—153։

անել, զ-առ-ի-վայր, զ-առ-ի-թափ, զ-առ-աշ-ել, զ-առ-աջ-աւոր և այլն, ի(յ) նն-ից հետո՝ յ-առ-աշ:

Զառիթափ, զառիվեր, զառիվայր, զառիհետ, զառիկող բառերում առ և ի նն-երը ցույց են տալիս տեղի, ուղղվածության (ուղևորման հայցականի) գաղափար: Այստեղ առ և ի նախդիրների միաժամանակ կիրառությունը պատահական չէ: Դրաբարում «առ ի + հայցական» կառույցն արտահայտում է նպատակի, պատճառի և վերաբերության, իսկ «առ ի + գործիական» կառույցը՝ տեղի գաղափար¹⁴: Միջին հայերենում արդեն առ նախդիրը «ի + տրական» կառույցի հետ գործածվում է տեղի իմաստով¹⁵, Առ և ի նն-ին իբրև զորացուցիչ միանում է գ-ն: Առիկալ և զառիկալ տարբերակները ցույց են տալիս զ նն-ի՝ իմաստային առումով ոչ էական լինելը: Զառամ բառում, թեկուզև միազնված կերպով, առկա է առ նն-ի «վրայից, վրայով» իմաստը, իսկ զառածանեմ, զառանցանեմ, զառանցեմ բառերում առ-ը հանդես է գալիս սոսկ ածանցական, բառակազմական նշանակությամբ:

Բառակազմական արժեքով առ նախդիրը հանդես է գալիս նաև գրաբարի՝ ըստ կազմության կրկնավոր մակբայներում, ինչպես՝ խիտ առ խիտ, դէմ առ դէմ, մօտ առ մօտ, երես առ երես, հասարակ առ հասարակ և այլն:

«—առ—» կաղապարով ունենք նոր կազմություններ ևս՝ մեկ առ մեկ, տուն առ տուն, տող առ տող և այլն: Այս վերլուծական կազմությունները միտում ունեն վերածվելու համադրականների:

4. Առ նն-ով առդի բառեր: Առ նախդիրը ժամանակակից հայերենում գրեթե լիովին զրկվել է իր սպասարկու դերից և վերածվել նախածանցի¹⁶, Առ նն-ով ժամանակակից հայերենում կազմվել են բազմաթիվ նոր բառեր, որոնցում այն իմաստային երկու դրսևորումով է հանդես գալիս՝ ա) երբեմնի նախդրային իմաստներով, որոնց հաշվառումով էլ ստեղծվել են այդ բառերը, բ) զուտ ածանցական արժեքով:

ա) նախդրային իմաստներից կենսունակ է «դեպի» իմաստը՝ առածից, առածել, առգետնել, առդիմել, առինքնել, առակնել: նախդրային հատուկենտ իմաստներ է արտահայտում առ նախածանցը հետևյալ բառերում՝ առաշյա («առաջ»), առնաշիվ («համար»), առմուտ («մոտ»):

Արդի հայերենում առ նախածանցով բառեր կազմելիս բնականորեն աչքի առաջ են ունենում հին հայերենի բառազանձը, համապատասխան (նման) նախդրավոր կազմությունները: Օրինակ՝ առգետնել բառը թերևս կազմվել է գ-գետնել բառի, առակնել-ը՝ յ-ակննել, գ-ակննել բառերի, առ-աշյա-ն՝ առ աշօք, առ աշս կազմությունների. առմուտ-ը՝ առ-դուտ-ի նմանակությամբ:

Առ նախածանցի բառակազմական լայն հնարավորություններն են վկայում առաճել, առձուլել, առկցել բառերը. առ-աճել (ռուս. при-растать) «աճելով միանալ, աճել-կալել», առ-ձուլել (ռուս. при-мнть) — «ձուլելով միացնել, եռակցել». տեխնիկական բառ է, առ-կցել (ռուս. при-клепать) — «կցել, իրար հետ կապակցել, միացնել»:

Թվարկյալ բառերում առ նախածանցի «մոտ, կից» նախդրային իմաստներն ավելի են ընդլայնվել՝ դառնալով «կիպ-կից», նույնիսկ՝ «միասին»: Այդ բառերը ցույց են տալիս առ նախածանցի իմաստային նոր դրսևորումը ժամանակակից հայերենում, նրանով տեղիներ կազմելու հնարավորության ծավալումը: Ակնբախ է, որ առ նախածանցն այժմ համապատասխանում է ուսե-

¹⁴ Հ. Աճառյան, Լիակատար բերականություն հայոց լեզվի, հ. 5, Երևան, 1965, էջ 83, Ա. Ա. Աբրահամյան, Նշվ. աշխ., էջ 282—283, Վ. Ա. Քոսյան, Նշվ. աշխ., էջ 189:

¹⁵ Վ. Ա. Քոսյան, Միջին հայերենի բառակապակցություններ, Երևան, 1984, էջ 163:

¹⁶ Բացառություն է առ նախդրի «մինչև» իմաստով կիրառությունը (առ 1-ը հունվարի...), մեկ էլ «մասին» իմաստով (առ այն, որ), երկուսն էլ՝ պաշտոնական լեզվի մեջ:

րենի ԲՐՄ-ին, որ դրվում է գլխավորապես բայերի վրա՝ արտահայտելով զանազան իմաստներ՝ 1. գործողությունը մինչև վերջ հասցնելը, ավարտելը, 2. միացնելը, ամրացնելը, 3. գործողության ուղղությունը դեպի ենթական, 4. ճնշում, սեղմում, հարում (դեպի ցած) և այլն:

Ռուսերենից պատճենված կամ նրա նմանակությամբ ստեղծված բառերը (առճոսել ժմեծ քանակությամբ դեպի մի տեղ գնալ՝ հոսել, լցվել, առնալել՝ ամետաղահալ հնոցի մեջ հավելանյութ լցնել [հալելու ընթացքում]) ցույց են տալիս, որ հայերենը կարող է օգտվել ռուսերենի «որս+глагол» — «առ+բայ» կառավարից՝ նոր բառեր (հատկապես՝ տերմիններ) կերտելու համար:

բ) Առ-ը հանդես է գալիս ղուտ ածանցական արժեքով: Ժամանակակից հայերենում առ նն-ի ղուտ ածանցական արժեքով կիրառությունն իր նախադեպն ունի դեռևս գրաբարում: Նկատելի է, որ գրաբարում առ նն-ը միանում էր առանձին գործածական բառերի (հատկապես՝ բայերի) ու կազմում էր ձևային, և՛ իմաստային տեսակետից նոր բառեր: Օրինակներ՝ առ-մառնեմ (հմմտ. մտանեմ)՝ «գաղտնագողի ներս սպրդել՝ ներս սողոսկել», առ-արգելում (հմմտ. արգելում)՝ «ընդհատել», առ-գտանիմ (հմմտ. գտանիմ)՝ «համակել» և այլն: Նույնպիսի կիրառությամբ՝ սոսկ ածանցական, բառակազմական նշանակությամբ, անկախ նախդրային իմաստներից, առ նն-ը հանդես է գալիս արդի հետևյալ բառերում. առբախում. — բժշկական տերմին է՝ «բախելը, ընդհատ-ընդհատ հարվածելը՝ ներքին դործսրանների դրությունը հարվածի ձայնի բնույթով որոշելու համար» նշանակությամբ, առգալում. — իրավաբանական տերմին է՝ «խուզարկության, ստուգման ժամանակ որոշ իրեր և փաստաթղթեր վերցնելը՝ գրավելը» նշանակությամբ, առմրոնել. — հոգեբանական տերմին է՝ «ունեցած փորձի հիման վրա ըմբռնել՝ յուրացնել», առնեցդած շրջանագիծ (ռուս. внебрачная окружность)¹⁷. — մաթեմատիկական տերմին է: Մաթերևս միակ դեպքն է, երբ առ նն-ը համապատասխանել է ռուսերենի вне-«արտա-» նախածանցին:

Նախդրային իմաստների առավել մթազնումից, ապա կորստից հետո առ նախածանցը գուցե մասնակցի բառակազմությանը հենց այսպիսի գործառնությունով, այսինքն՝ սոսկ ածանցական նշանակությամբ, իբրև ռուսերեն կառույցների պատճենման, նորերի ստեղծման միջոց: Դրա նախադրյալները կան: Ինչպես վերը բերված բառերն են ցույց տալիս, առ-ը հաջողությամբ կիրառվում է գիտաբառերի ստեղծման ժամանակ:

Այսպիսով, նյութի քննությունը ցույց տվեց, որ առ նն-ավոր բառերը կարելի է բաժանել երեք շերտի՝ ա) նախադրային, բ) գրաբարյան, գ) ժամանակակից: Առ նն-ով բառերի կազմման տարբեր ուղիներ կան՝ ա) նն-ը դրվում է անմիջապես հնի. արմատների, հայերեն, հազվադեպ՝ նաև փոխառյալ բառերի վրա, բ) պատճենումներ են կատարվում հունարենից, այժմ՝ ռուսերենից, գ) շարահյուսական կառույցները քարանում-մթազնվում են, դ) կաշույնանում է բայերի խնդրառությունը, ե) տեղի է ունենում հայերեն բառերի համաբանություն: Ժամանակակից հայերենում շարունակվում է գրաբարից ձևածավալանդությունը. նորակազմ բառերում առ նն-ը դրվում է միայն հայերեն բառերի վրա:

Առ նն-ը հանդես է գալիս իմաստային տարբեր ղրսևորումներով՝ ա) լիովին կամ հիմնականում մթազնված, բ) նախդրային իմաստներով, գ) նոր իմաստներով և իմաստային երանգներով, դ) ղուտ ածանցական նշանակությամբ:

Առ նն-ով կազմված բառերը ըստ իրենց խոսքիմասային պատկանելության լինում են գոյական, ածական, բայ, մակբայ, նախադրություն: Գերակշռում են բայերը:

¹⁷ Ա. Հ. Տոնյան, Վ. Ա. Տոնյան, Մաթեմատիկական տերմինների բառարան, Երևան, 1965:

Հայոց լեզվի զարգացման տարբեր շրջաններում առ նն-ը միատեսակ կենսունակություն չի ունեցել: Այն առավել զործուն է եղել V—VIII դդ. (հունարանական շարժման ընթացքում), ակտիվացում է նկատվում սովետական շրջանում:

СЛОВООБРАЗОВАТЕЛЬНАЯ ЗНАЧИМОСТЬ ПРЕДЛОГА *ԱՆ*

ДАВИД ГЮРДЖИНЯН

Резюме

С помощью «предложной приставки» *ԱՆ* в армянском языке образовались слова: а) от непосредственно индоевропейских корней; б) путём калькирования (от греческого — в древнеармянском, от русского — в современном армянском); в) путём затмения синтаксических конструкций; г) путём аналогии.

Согласно исторически сложившейся традиции, слова с помощью *ԱՆ* (и других «предложных приставок») образуются исключительно от армянских лексических основ.

В известных древнейших словах предложные значения *ԱՆ* затемнены, а в большинстве образований они проявляются более или менее четко. В современном армянском предлог *ԱՆ* выступает в основном в сугубо аффиксальной функции.